

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ու Թ Յ Ու Ն

Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող

մարզային հանձնաժողովի նիստի

Նիստին մասնակցում էին հանձնաժողովի անդամները, հասարակական կազմակերպությունները ինչպես նաև «Սեյվ դը չիլդրեն»-ի հայաստանյան ներկայացուցչության անդամները:

Օրակարգում

1. «Համայնքահեն ծառայություններ հաշմանդամություն ունեցող երեխաների համար» եռամյա ծրագրի քննարկում:

2. Հաշմանդամություն ունեցող անձանց մատուցվող ծառայությունների հասանելիություն և մատչելիություն:

Բացելով նիստը տիկին Մուրադյանը տեղեկացրեց, որ մինչ օրս հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող հանձնաժողովը իրականացրել է 2016թ Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամություն ունեցող անձանց համար հավասար հնարավորության տարի և տարվա կտրվածքով նախատեսված միջոցառումները: Նա կարևորեց հաշմանդամների միջազգային օրվա նշանակությունը, ներկայացրեց մարզում իրականացվող աշխատանքներն այդ ուղղությամբ:

Օրակարգի 1-ի հարցի հետ կապված հանդես եկավ «Արմավիրի զարգացման կենտրոն» հասարակական կազմակերպության տնօրեն՝ Նաիրա Առաքելյանը: Ներկայացրեց ծրագրի շրջանակներում ստեղծված երեխաների աջակցության կենտրոնի գործունեությունը, մատուցվող ծառայությունները, աջակցությունը հաշմանդամություն ունեցող երեխաներին և նրանց ընտանիքներին:

Իր զեկույցով հանդես եկավ նաև «Սեյվ դը չիլդրեն»-ի հայաստանյան ներկայացուցիչը, ով ֆինանսավորում է «Համայնքահեն ծառայություններ հաշմանդամություն ունեցող երեխաների համար» եռամյա ծրագրը, նշելով որ իրենց բուն նպատակն է խթանել և նպաստել հաշմանդամություն ունեցող երեխաների կարողությունների, ինքնուրույնության հմտությունների զարգացմանն ու հասարակության մեջ ներառմանը:

Ստեղծվեց մարզային ընդլայնված աշխատանքային խումբ, որը հետագայում կաշխատի հաշմանդամություն ունեցող անձանց խնդիրների վերհանման, նրանց իրավունքների իրականացման ընթացքում ծագած խնդիրների լուծման, հավասար պայմանների, հասարակական կյանքում նրանց առավելագույնս ներգրավվածության ապահովման, սոցիալական հիմնախնդիրների լուծմանն աջակցելու ուղղությամբ:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝

Լ. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Արձանագրող՝ Հ. Հարությունյան